ՀՏԴ 82.09

Doi:10.54503/0135-0536-2024.3-290

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ԳՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ՎԱՂ ԿԼԱՍԻՑԻԶՄԻՑ ՄԻՆՉ 20-ՐԴ ԴԱՐԻ 20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ). ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ*

Հոկտեմբերի 8–10-ը Երևանում տեղի ունեցավ «Գրական ուղղությունները և դպրոցները համաշխարհային դասական գրականության և ազգային գրականությունների համատեքստում (վաղ կլասիցիզմից մինչ 20-րդ դարի 20-ական թվականներ). տիպաբանությունը, ընդհանրություններն ու առանձնահատկությունները» խորագրով միջազգային գիտաժողովը: Այն կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը (ԳԻ)՝ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի (ՌԳԱ) Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի, Վենետիկի Մխիթարյան միաբանության հետ: Գիտաժողովն անցկացվեց ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին առաջատար գիտնականներ ԳԻ-ից, հանրապետության տարբեր գիտակրթական հաստատություններից, տեսաբան-հետազոտողներ Ռուսաստանի Դաշնությունից, Չինաստանից, Հունաստանից, Վենետիկից: Ընդհանուր առմամբ ներկայացվեց 34 զեկուցում:

Գիտաժողովի նպատակն էր՝ համեմատական գրականագիտության և գրականության տեսության ժամանակակից մեթոդներով անդրադառնալ XIX դարավերջի և XX դարասկզբի հայ և համաշխարհային գրականության ընթացքին ու ներքին տեղաշարժերին, գրական ուղղությունների ձևավորման պատմությանը, միջմշակութային առնչություններին ու փոխազդեցություններին, նպաստել միջազգային գիտական հանրության ներկայացուցիչների հետ կապերի ընդլայնմանը, գիտության արդի ընթացքին ներգրավել երիտասարդ գիտնականների և հետազոտողների: Խնդիր էր դրվել. հենվելով միջազգային և միջգիտակարգային հետազոտությունների վերջին փորձի ու ձեռքբերումների վրա՝ ազգային գրականության փաստանյութը տեղայնացնել մշակութային և գիտական մեծ ժամանակի մեջ ու ներկայացնել նոր մեկնաբանությամբ:

Գիտաժողովը բացվեց ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Բացման խոսքով հանդես եկավ և մասնակիցներին ողջունեց ԳԻ տնօրեն, բ. գ.

---

* *Ներկայացվել է 04. XI. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:*

թ. Հերիքնազ Որսկանյանը: Նա, կարևորելով գիտաժողովի գիտատեսական ուղղվածությունն ու տարբեր երկրների գիտնականների հետ համագործակցության անհրաժեշտությունը, իր ելույթում մասնավորապես նշեց. «Թվում է, որ գրականագիտությունը վաղուց յուրացրել է ուղղությունների ու հոսանքների պատմությունը, որոնց սկզբունքները, ընդհանրություններն ու տարբերությունները հանգամանորեն լուսաբանվել են հետազոտողների աշխատություններում: Սակայն խնդիրն այն է, որ գրական ուղղությունների պատմությունը միագիծ չէ. երբեմն զուգահեռ են ընթացել, երբեմն՝ փոխլրացրել մեկը մյուսին, անցել են զարգացման մի քանի փուլեր: Տարբեր երկրներում ձևավորված նույն ուղղությունը երբեք չի եղել մեխանիկական կրկնություն: Ուստիև, դեռևս արժեքների վերագնահատման խնդիրներ կան, առաջ քաշված տեսակետների վերանայման խնդիրներ, այդ ազգային գրականության մեջ տվյալ ուղղության և դպրոցի սահմանների ճշգրտման խնդիրներ՝ սոցիալական, քաղաքական, կենցաղային, հոգևոր իրականության իմացությամբ, անհատի և հասարակության ճակատագրերի, կյանքի ներքին շարժումների վերլուծությամբ: Այդ է վկայում նաև գիտաժողովի հարցադրման հանդեպ մասնագիտական լայն հետաքրքրությունը. բազմաթիվ զեկուցումներ, տարբեր երկրների գիտնականների մասնակցություն՝ խորքային և մասնակի հարցերի քննությամբ»:

ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, *ողջունելով գիտաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին և հյուրերին, կարևորեց գիտական միջոցառման նշանակությունը՝ արժեքների վերագնահատման, հարցադրումների լայն շրջանակի, գիտաքննական-ակադեմիական ուղղվածության իմաստով: «Զեկուցումների մեջ, – ընդգծեց ակադեմիկոս-քարտուղարը՝ գիտաժողովն առիթ համարելով նոր ուսումնասիրությունների մեկնակետի, – հաստատապես փորձ է արվելու դիտարկել գրական զարգացման ընթացքն ըստ գրական ուղղությունների, ապա՝ այս կամ այն ձևով անդրադառնալ գրական դպրոցներին, ստեղծագործական մտածողության զանազան ձևերին նաև ըստ գրական ժանրերի, համեմատական-պատմաքննական տեսություն տալ հայ և համաշխարհային գրականության նույնօրինակ իրողությունների վերաբերյալ»:*

Գիտաժողովի մասնակիցներին ուղերձ հղեց և այսօրինակ գիտական հանդիպումները՝ փորձի փոխանակման ու արդյունավետության իմաստով բարձր գնահատեց Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան, ՌԳԱ ակադեմիկոս Միխայիլ Պիոտրովսկին:

Լիագումար նիստում լսվեց ութ զեկուցում: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Ալլիտա Դոլուխանյանը *ներկայացրեց «Տիպաբանությունը հայ միջնադարյան պաշտոնական գրականության մեջ» թեմայով զեկուցումը, լսվեցին ԳԻ առաջատար գիտաշխատող, բ. գ. դ.* Պետրոս Դեմիրճյանի *«Եվրոպական և հայկական սիմվոլիզմ. ընդհանրություններն ու առանձնահատկությունները», բ. գ. դ., պրոֆ.* Արա Առաքելյանի *«Պոետիկա» հասկացության փոխակերպումները եվրոպական գրականության պատմության համատեքստում», Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. դ., պրոֆ.* Աշոտ Գալստյանի՝

«Ռեալիզմի ազդեցությունը 19-րդ դարավերջի հուշագրության մեջ. լեզու և կառուցվածք» խորագրերով զեկուցումները:

ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը *խոսեց քիչ արծարծված մի խնդրի՝ հեքիաթի ժանրի վերաբերյալ Հակոբ Օշականի տեսակետի մասին՝ հանդես գալով «Յակոբ Օշականը հէքեաթի ժանրի տիպաբանական ընկալումների շուրջ» զեկուցմամբ:*

ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ., պրոֆ. Դավիթ Գասպարյանը *ելույթ ունեցավ «Հայկական ապագայապաշտության տեսական և պատմական առանձնահատկությունները» թեմայով զեկուցմամբ, ԳԻ առաջատար գիտաշխատող, բ. գ. դ., դոցենտ* Սուսաննա Հովհաննիսյանը՝ *«Ռուս գրողներն ու գրական դպրոցները հայ պարբերականների էջերում (1890-ական–1910-ական թթ.)», ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, բ. գ. դ.* Անուշավան Զաքարյանը՝ *«Յուրի Վեսելովսկին՝ ռուս-հայ գրական կապերի ռահվիրա» խորագրերով զեկուցումներով:*

Հայագետ-գիտնականների ելույթները՝ կառուցված դասական գրականագիտության ծանրակշիռ փորձի և գրականության տեսության արդիական հարցադրումների ու միտումների համադրությամբ, ընդունվեցին մեծ հետաքրքրությամբ և տարբեր առաջադիր խնդիրների վերաբերյալ բուռն քննարկումներով:

Հոկտեմբերի 9-ին և 10-ին գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին ԳԻ-ում:

Հոկտեմբերի 9-ի առաջին նիստում, որը թեմատիկ ուղղվածությամբ առնչվում էր սիմվոլիզմի պատմությանն ու տեսությանը, իրենց զեկուցումները ներկայացրին Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վաչագան Գրիգորյանը՝ *«Նեոռոմանտիկական շարժումը հայ գրականության մեջ», ՌԳԱ Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ.* Բուրաստան Զուլումյանը՝ *«Վահան Թեքեյանի «Հոգեր» բանաստեղծական շարքը և հայ սիմվոլիզմի ակունքները», Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դասախոս, բ. գ. թ., դոցենտ* Դոնարա Մկրտչյանը՝ *«Պոեզիայի և արձակի սահմանին. գրական էկլեկտիզմ», ՌԴ-ում ՀՀ դեսպանության մշակույթի կենտրոնում գործող հայագիտական ամբիոնի վարիչ, բ. գ. թ.* Ալիդա Մարանջյանը՝ *«Սիմվոլիզմի գեղագիտությունը արևմտահայ բանաստեղծության ակունքներում. Միսաք Մեծարենց, Ռուբեն Սևակ, Վահան Թեքեյան, Մատթեոս Զարիֆյան» խորագրերով: Ելույթ ունեցան ԳԻ ավագ գիտաշխատող, բ. գ. թ.* Հրաչ Սարիբեկյանը՝ *«Ֆրանսիական «նոր վեպն» ու Զարեհ Որբունին», ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դասախոս, բ. գ. թ., դոցենտ* Նաիրա Խաչատրյանը՝ *«Սենտիմենտալիզմը XIX դարասկզբի հայ գրականության համատեքստում», ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դասախոս, բ. գ. թ., դոցենտ* Քնարիկ Աբրահամյանը՝ *«Ռոմանտիկ հայեացքը արևմտահայ նամակագրութեան մէջ» թեմաներով զեկուցումներով:*

Նիստն ավարտվեց զեկուցումների վերաբերյալ հարցերով և գնահատողական ելույթներով: Զեկուցումները մեծ հետաքրքրություն էին առաջացրել արծարծված խնդիրների գիտական մեկնաբանության նոր մեթոդներով:

Նույն օրվա երկրորդ նիստի ժամանակ հնչած ելույթներն առավելապես առնչվում էին գրական ուղղությունների և մեթոդների պատմությանը, գի-

տական նոր խնդրադրությամբ դրանց պատմատիպաբանական ընդհանուր հատկանիշների և ազգային առանձնահատկությունների գնահատությանը: «Ֆրանսիական կլասիցիզմի գեղագիտական տեսությունը. կանոնակարգի և ազատության միջև» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ՌԳԱ Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի Արևմուտքի դասական գրականությունների և համեմատական գրականագիտության բաժնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Անդրեյ Գոլուբկովը: *Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի արտասահմանյան գրականության պատմության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ.* Լարիսա Պոլուբոյարինովան *և Գի գիտաշխատող, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի դոկտորանտ, բ. գ. թ.* Լուիզա Գասպարյանը *ներկայացրին համատեղ զեկուցում՝ «Հետպատերազմյան տրավմայի արտացոլումը Վ. Վուլֆի «Միսիս Դելոուեյ» ստեղծագործության մեջ (Հայկական հարցի մեկնաբանությամբ)» վերնագրով: Վենետիկի Կա'Ֆոսկարի համալսարանի պրոֆեսոր, բ. գ. թ.* Սոնա Հարությունյանն *իր ելույթում, որ վերնագրված էր «Մխիթարեանների թարգմանական գործունէութիւնը», անդրադարձավ Մխիթարյան միաբանության գիտական գործունեությանը, մասնավորապես՝ նրանց կատարած թարգմանություններին: Թումանյանի գրական մեթոդների խաչաձևումների շուրջ զեկուցումով ներկայացավ Գի թումանյանագիտական խմբի ղեկավար, բ. գ. դ., դոցենտ* Եվա Մնացականյանը՝ *«Գրական մեթոդների խաչաձևումները Հովհաննես Թումանյանի ստեղծագործական աշխարհում» զեկուցումով, իսկ ՀՊՄՀ բանասիրության ֆակուլտետի դասախոս, բ. գ. թ.* Աննա Սարգսյանի *զեկուցման առարկան Զապել Եսայանի գրականությունն էր. նա հանդես եկավ «Զապել Եսայանի գրական մեթոդը» թեմայով:*

Գի սփյուռքահայ գրականության ուսումնասիրության բաժնի վարիչ, բ. գ. թ. Արմեն Ավանեսյանը *խոսեց Շանթի գեղագիտության մասին՝ ելույթ ունենալով «Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման և 20-րդ դարասկզբի գրական ուղղությունները» թեմայով զեկուցմամբ, Գի գիտաշխատող, բ. գ. թ.* Նաստա Սարգսյանը *ներկայացրեց Լևոն Շանթի դրամատուրգիայի քննության մի այլ դրվագ՝ հանդես գալով «Սիմեոն Հակոբյանը սիմվոլիզմի տեսաբան. «Սիմվոլիզմը դրամայի մեջ» ուսումնասիրության հիմնարար դրույթները» զեկուցմամբ:*

Գիտաժողովի երրորդ՝ եզրափակիչ օրը ևս աչքի ընկավ զեկուցումների բազմազանությամբ և դրանցում քննարկվող խնդիրների կարևորությամբ: Առաջին նիստի ժամանակ ելույթ ունեցան Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի դասախոս, բ. գ. թ., դոցենտ Եվգենիա Միտկինան՝ *«20-րդ դարասկզբի չինական և արևմտյան դետեկտիվի համեմատական քննութ-յուն», ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ, բ. գ. թ., դոցենտ* Կարեն Խանյանը՝ *«Մաքսիմ Գորկին և հայ մամուլը», Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Զանչունի համալսարանի դասախոս* Մարիաննա Բալոյանը՝ *««Ներքին մարդու» խնդիրը Վլադիմիր Զազուբրինի «Տաշեղ» հոգեբանական պատմվածքում» թեմաներով զեկուցումներով: Գի հայ նոր գրականության բաժնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ* Սիրանուշ Մարգարյանը *հան-դես եկավ «Գարեգին Սրվանձտյանցի երկերի քննությունը միֆոլոգիական դպրոցի լույսի ներքո» թեմայով զեկուցմամբ, միջնադարյան գրականության տիպաբանական որոշ խնդիրների անդրադարձան «Զորս գետք» արևելաքրիստոնեական ուսումնասիրությունների հիմնադրամի փորձագետ, բ. գ. թ.* Նարիրա Թա-

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 3

մամյանը՝ «Կանանց կերպարային դրսևորումները հայ և եվրոպական գրականության մեջ (XI–XIV դդ.)», Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող Օվսաննա Խաչատրյանը՝ «Անհեղինակ հանելուկները Հայմավուրքներում» զեկուցումներով:

Վերջին նիստի երկու զեկուցումները նվիրված էին Ավետիք Իսահակյանի ստեղծագործության փիլիսոփայական շերտերի քննությանը: ԳԻ ավագ գիտաշխատող, բ. գ. թ., դոցենտ Նունե Մկրտչյանը ներկայացրեց «Սիրո հավերժության փիլիսոփայությունը Իսահակյանի ստեղծագործություններում. «Հավերժական սերը», «Լիլիթ»» թեմայով զեկուցումը, ԳԻ գիտաշխատող, բ. գ. թ. Անի Ղազարյանը հանդես եկավ «Բարուց և չարից անդին. Իսահակյանը նիցշեական փիլիսոփայության կրող» թեմայով զեկուցմամբ:

Գիտաժողովի մասնակիցներն ու ներկաները ոգևորությամբ ընդունեցին երիտասարդ հետազոտողների զեկուցումները, որոնք աչքի ընկան ակադեմիական գրականագիտությանը հավատարիմ մնալու և գիտության մեջ նոր խոսք ասելու երիտասարդական պատվախնդրությամբ: ԳԻ կրտսեր գիտաշխատող, բ. գ. թ. Սիրանուշ Փարսադանյանի զեկուցման թեման էր «Լևոն Մանվելյանի դերը 20-րդ դարասկզբի հայ գրականության համատեքստում», ԳԻ կրտսեր գիտաշխատող, բ. գ. թ. Զարինե Սառաջյանը խոսեց Արցախական աշխարհի խորհրդանիշներից մեկի՝ Ամարասի մասին՝ հանդես գալով «Ամարասը և մշակութային հիշողությունը. հայ պատմագրությունից մինչև 19-րդ դարի գրականություն» զեկուցումով: ԳԻ կրտսեր գիտաշխատող Քրիստինե Մելքումյանի զեկուցումն առնչվում էր Մխիթարյանների դասագրքաստեղծ գործունեությանը՝ «Կլասիցիստական գեղագիտության դրսևորումները Մխիթարյանների դասագրքերում (18-րդ դար)»: Նիստը եզրափակեց ԳԻ ասպիրանտ Արթուր Միրզոյանը՝ զեկուցելով «Ռաֆֆու պատմահայեցությունը ռոմանտիզմի տիպաբանական համակարգում» թեմայով:

Գիտաժողովի աշխատանքին հետևում էին ասպիրանտներ, ուսանողներ, անհատ-հետազոտողներ: Ներկայացուցչական ու մասշտաբային գիտաժողովի արդյունքները դարձան կարևոր հանգրվան գրականագիտության, մասնավորապես՝ գրականության տեսության և համեմատական գրականագիտության ասպարեզում:

Գիտական հավաքն ավարտվեց եզրյթներով, հետագա նմանօրինակ միջոցառումների համար հեռանկարային ծրագրերի վերաբերյալ առաջարկություններով:

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության պատմության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ նոր գրականության պատմություն, նորագույն շրջանի հայ գրականության պատմություն, գրական քննադատություն: Հեղինակ է 2 գրքի և 40-ից ավելի գիտական հոդվածի: ORCID:0000-0003-1009-3514. siranush.margaryan.71@mail.ru.